

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ **ԱՅԼԵՒԱՅԼՔ**

ՀՈԳԵՒՈՐ ՊԵՏԵՐՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՅՅԸ ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԱՃԱՐԻ ՅԱՏԱԿԻ ԵՒ ՀԻՄԵՐՈՒ ՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՄՐԱՅՄԱՆ ՎԱՅՐ

Ձորեքշաբթի, 11 Յունուար, 2023-ին, Սուրբ Յարութեան տաճարի իրաւատէր երեք համայնքներու հոգեւոր պետերը հերթական անգամ այցելեցին տաճարէն ներս կատարուող յատակի վերանորոգման եւ հիմերու ամրացման աշխատանքներու վայր՝ մօտէն ծանօթանալու կատարուող աշխատանքներուն: Կատարուած եւ կատարուելիք աշխատանքներու մասին հոգեւոր պետերուն հանգամանօրէն բացատրութիւններ տրուեցան հնագիտական եւ վերանորոգման աշխատանքներն իրականացնող խումբերու ղեկավարներու կողմէ:

ԺԱՌԱՆԳԱՒՈՐԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԵՒ ԸՆԾԱՅԱՐԱՆԻ ԱՄԱՆՈՐԵԱՅ ՀԱՆԴԷՍ

Ուրբաթ, 13 Յունուար, 2023-ին, երեկոյեան ժամը 7-ին, Սուրբ Ծննդեան տօնական հանդիսութեանց սեմին, ընդունուած սովորութեան համաձայն, Ժառանգաւորաց վարժարանի եւ Ընծայարանի սաները հանդէս եկան Կաղանդի գեղեցիկ յայտագիրով՝ համեմուած գեղեցիկ խմբերգերով, ասմունքով եւ թառի գեղեցիկ մեղեդիի կատարմամբ:

Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արք. Ղարիպեան Սրբազան Հօր եւ միաբանութեան ժամանումէն յետոյ, երեկոյի բացման խօսքն ըրաւ վարժարանի փոխտեսուի՝ Բարեշնորհ Աշոտ Սարկաւազ Ղազարեան՝ բարի գալստեան եւ Նոր Տարւայ շնորհաւորական խօսքեր ուղղելով ներկաներուն: Ապա Ժառանգաւոր սաներէն Գրիգոր Բերնեցեան թառով նուագեց «Մշոյ աղջիկ» ժողովրդական երգը, Ա. Ընծայարանի ուսանողները հանդէս եկան Միսաք Մեծարենցի «Հիւղը» բանաստեղծութեան ասմունքով, իսկ Ժառանգաւորացի Ա. եւ Դ. լսարաններու սաները՝ Մետաքսէի «Թող այս գիշեր» եւ Վահան Թէքէեանի «Լուսաւորչի կանթեղը» բանաստեղծութիւններու ասմունքով: Երեկոյի ընթացքին Ժառանգաւորաց երգչախումբը Տրց. Իվան Ադամեանի խմբավարութեամբ՝ կատարեց «Joy to the world», «Լուռ գիշեր», «Աւետիս եւ Քրիստոս ի մէջ» եւ «Իմ անուշ երկիր» խմբերգերը: Ապա Բարեշնորհ Յովհաննէս Սարկաւազ խուտավերտեան խօսեցաւ Կաղանդի մասին:

Հանդիսութեան վերջաւորութեան վարժարանի փոխտեսուի՝ Բարեշնորհ Աշոտ Սարկաւազ Ղազարեան հրաւիրեց Գերաշնորհ Լուսարարապետ Սրբազան Հայրը կատարելու իր շնորհաւորական խօսքն ու փակման աղօթքը:

ԿԱՂԱՆԳ, ՏԱՐԵՄՈՒՏ 2023 ԹՈՒԱԿԱՆԻ

Ինչպէս յայտնի է, Երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւնը եկեղեցական բոլոր տօները եւ Կաղանդը կը տօնախմբէ հին (Յուլեան) տոմարով, որ ունի 13 օրուայ տարբերութիւն նոր (Գրիգորեան) տոմարէն:

14 Յունուար, 2023-ին, Հին տոմարով Նոր Տարիին, առաւօտեան ժամը 8-ին, Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ Առաւօտեան ժամերգութիւն եւ մատուցուեցաւ սուրբ պատարագ:

Տօնի սուրբ եւ անմահ պատարագը Մայր Տաճարի աւագ խորանին վրայ մատուցեց Հոգեշնորհ Տ. Արշակ Աբեղայ Ղազարեան:

Պատարագէն յետոյ, նախագահութեամբ Լուսարարապետ Սրբազան Հօր՝ Միաբանութիւնը, ժառանգաւոր սաները եւ Սաղիմահայ ժողովուրդը Սուրբ Աթոռոյս օրհներգի՝ «Օրհներգէք» շարականի երգեցողութեամբ, թափօրով բարձրացան Պատրիարքարան, ուր Սրբոց Թարգմանչաց վարժարանի սաներէն Տաթևիկ Ոսկանեան յանուն վարժարանի աշակերտութեան եւ տեսչութեան Ամանորեայ բարեմաղթանք ընթերցաւ՝ ուղղւած Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր: Ապա Սուրբ Աթոռոյս Գահակալը օրհնուած նարիչներ բաժնեց ներկաներուն:

Կ. ՊՈԼՍՈՅ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐԺ Ն.Ա.Տ. ՍԱՀԱԿ ԱՐՔ. ՄԱՇԱԼԵԱՆԻ ԱՆԳՐԱՆԻԿ ԱՅՅԸ ՍՈՒՐԲ ԵՐԿԻՐ

Հայ Եկեղեցին Երուսաղէմի մէջ, ըստ հին տոմարի, սովոր է տօնել Քրիստոսի Ծնունդը եւ Աստուածայայտնութիւնը Յունուար 19-ին: Այս տօնախմբութեան եւ հոգեւոր վերազարթնումին իր օրհնաբեր մասնակցութիւնը բերելու նպատակով Կ. Պոլսոյ Հայ Պատրիարք՝ Ամենապատիւ Տ. Սահակ Արք. Մաշալեան, իր շքախմբով ժամանեց Սուրբ Երկիր: Ամեն. Տ. Սահակ Պատրիարք Մաշալեան, իր տասնօրեայ ուխտագնացութիւնը դէպի Սուրբ Երկիր սկսաւ 17 Յունուար, 2023-ին: Այս Նորին Ամենապատուութեան առաջին պաշտօնական այցն է Սուրբ Երկիր՝ իբրեւ Կ. Պոլսոյ Հայ Պատրիարք:

Թէլ Ավիվի «Պէն Կուրիոն» օդակայանի մէջ Ս. Աթոռոյս Դիւանապետ՝ Հոգշ. Տ. Կորին Վրդ. Բաղդասարեանի կողմէ դիմաւորուելէ ետք, Նորին Ամենապատուութիւնը մեկնեց Երուսաղէմ:

Երուսաղէմի՝ հին քաղաքի Եաֆայի դրան մուտքին Պատրիարք Սրբազան Հայրը դիմաւորելու եկած էին Սրբոց Յակոբեանց միաբան հայրերը, քրիստոնեայ համայնքներու հոգեւոր պետերը եւ ներկայացուցիչները, Իսրայէլի մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպան՝ Տիար Արման Յակոբեանը, ժառանգաւոր սաները, Երուսաղէմացի հայերը, ուխտաւորները՝ Հայաստանէն, Կ. Պոլիսէն եւ արտասահմանէն, ՀԵՄ-ի սկաուտական խումբը, ինչպէս նաեւ օտարականներ, որոնք անհամբեր կը սպասէին Ամեն. Տ. Սահակ Պատրիարք Սրբազան Հօր ժամանումին:

Ժամը 13:30-ին, Պատրիարք Սրբազան Հօր ինքնաշարժը ժամանեց Եաֆայի դուռ, ապա Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Սեւան Արք. Ղարիպեան, որ կը նախագահէր թափօրին, բարի գալուստ մաղթեց Նորին Ամենապատուութեան, որմէ յետոյ եկեղեցականաց թափօրի ուղեկցութեամբ եւ ՀԵՄ-ի սկաուտներու թմբուկի եւ փողերու

նուագակցութեամբ Պատրիարք Սրբազան Հայրը անցնելով հին քաղաքի փողոցներէն՝ մուտք գործեց Հայոց Պատմական Վանք եւ Սրբոց Յակոբեանց Մայր Տաճար:

Նորին Ամենապատուութիւնը «Հրաշափառ»-ով առաջնորդուեցաւ Սբ. Գլխադիր, խնկարկեց եկեղեցին եւ եկեղեցականները, ապա ծնրադրելով՝ իր ուխտի աղօթքը բարձրացուց առ Աստուած: Ուխտի աղօթքէն ետք, Աւագ Խորանին առջեւ Լուսարարապետ Սրբազան Հայրը դարձեալ բարի գալուստ մաղթեց Պատրիարք Սրբազան Հօրը, եւ իր ուրախութիւնը յայտնեց, որ Կ. Պոլսոյ Հայ Պատրիարքն իր շքախմբով ուխտի եկած է Սուրբ Երկիր՝ տօնելու մեր Տիրոջ Հրաշափառ Սուրբ Ծնունդը եւ զօրակցելու Սրբոց Յակոբեանց Միաբանութեան եւ Ժառանգաւոր սաներուն: Ապա հրաւիրեց Ամեն. Տ. Սահակ Պատրիարք Սրբազան Հայրը իր խօսքն ըսելու ներկաներուն, որ նախ՝ փառք տուաւ Աստուծոյ իրեն ընծայուած այս բացառիկ առիթին համար, ապա իր ուրախութիւնը յայտնեց, որ կը գտնուի Երուսաղէմի մէջ, եւ ըսաւ, թէ Երուսաղէմը իրեն համար բացառիկ արժէք ունի, քանի որ երեք տարի ծառայած է Ս. Աթոռոյս, իսկ Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարի կամարներուն տակ գտնուիլը իրեն համար իր տան մէջ գտնուիլ ըսել է: Իր խօսքին մէջ, Նորին Ամենապատուութիւնը շնորհակալութիւն յայտնեց նաեւ Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամեն. Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանին, որու բարձր տնօրինութեամբ իրականացաւ սոյն ուխտագնացութիւնը, Զինուորեալ միաբանութեանը, որու իւրաքանչիւր անդամ իր կեանքը նուիրաբերած է Քրիստոսակոխ սրբավայրերը անվթար պահելուն եւ Հայ եկեղեցւոյ դարաւոր իրաւունքները պահպանելուն: Ան իր սէրը եւ խոնարհումը բերաւ Ս. Աթոռոյս ծառայող իւրաքանչիւր միաբանի եւ ժողովուրդի հանդէպ:

Պատրիարք Սրբազան Հօր խօսքէն ետք, Ս. Աթոռոյս օրհներգի՝ «Օրհնեցէք» շարականի երգեցողութեամբ միաբանութիւնը, Ժառանգաւոր սաները եւ ուխատուոր ժողովուրդը թափօրով Ն.Ա.Տ. Սահակ Պատրիարք Մաշալեանը առաջնորդեցին Պատրիարքարան, ուր ան դիմաւորուեցաւ Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ն.Ա.Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի կողմէ: Ապա Սուրբ Աթոռոյս Գահակալը «Պահպանիչ»-ով փակեց Ամեն. Տ. Սահակ Պատրիարք Մաշալեանի դիմաւորման արարողութիւնը, որմէ յետոյ ներկաները մօտեցան աջամբօրի՝ ստանալու երկու գահակալներու օրհնութիւնը:

Վերջաւորութեան Ամեն. Տ. Սահակ Պատրիարք Մաշալեան սոյն այցելութեան որպէս յիշատակ Սուրբ Աթոռոյս Գահակալի նուիրեց խեթական ոճով ապակեայ թանկագին սրուակ մը:

ՀԱՅՈՑ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴԸ ԲԵԹՂԵՏԷՄԻ ՄԷՋ

18 Յունուար, 2023-ին, Հայոց Սուրբ Ծնունդի առաւօտեան ժամը 9:30-ին, ոստիկանները այցելեցին Պատրիարքարան, Ն.Ա.Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի եւ Ն.Ա.Տ. Սահակ Պատրիարք Մաշալեանի Ս. Ծնունդը շնորհաւորելու եւ ղէպի Բեթղեհէմ թափօրին հսկողութիւնն ապահովելու համար:

09:45-ին, Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Արքեպս. Մանուկեան, ընկերակցութեամբ Կ. Պոլսոյ Հայ Պատրիարք՝ Ամենապատիւ Տ. Սահակ Արքեպս. Մաշալեանի, հոգեւորականաց դասին եւ ժողովուրդին, Պատրիարքարանէն ինքնաշարժներու շարանով ճամբայ ելան ղէպի Բեթղեհէմ: Ճամբու կիսուն, Յունաց Ս. Եղիա

եկեղեցիին մօտ, երկու Պատրիարքներուն դիմաւորելու եկած էին Պէթ Ճալայի, Պէթ Սահուրի քաղաքապետները, եւ Պաղեստինեան իշխանութեան ներկայացուցիչներ: Ապա զոյգ Պատրիարքներու ինքնաշարժի բոլորտիքը ընկերացան Իսրայէլեան հինգ ձիաւորներ:

Բեթղեհէմ քաղաքի մուտքին Իսրայէլեան ձիաւորները փոխանակուեցան Պաղեստինեան ձիաւորներով, որոնք թափօրը առաջնորդեցին մինչեւ Սուրբ Բեթղեհէմի հրապարակը: Հ.Ն.Միութեան, Հ.Մ.Ը.Միութեան, Կաթոլիկեան Մար Եուսէֆ եւ Terra Sancta, ինչպէս նաեւ Յունաց «Ռուստ» սկառուներու խումբերը նուագով եւ քայլերթով ողջունեցին զոյգ Պատրիարքները: Բարի գալուստի համար Բեթղեհէմի հրապարակին վրայ դիմաւորելու եկած էին Բեթղեհէմի քաղաքապետ՝ Տիար Հաննա Հանանիա, նահանգապետը՝ Տիար Քեամալ Ահմատ Հասան Ամիդ, Պաղեստինի քրիստոնեաներու հարցերով բարձրագոյն խորհուրդի նախագահ՝ Տիար Ռամզի Խուրի եւ բարձրաստիճան զինուորականներ: Ժողովուրդը եւ հայ ուխտաւորներ արդէն կը սպասէին Պատրիարքներու ժամանումին:

Ժառանգաւոր սաներու «Խորհուրդ Մեծ» շարականի երգեցողութեամբ, եւ Տաճարին զանգերու ղօղանջին ներքոյ զոյգ Պատրիարքներու գլխաւորած թափօրը բարձրացաւ Ս. Ծննդեան Տաճարի Հայկական վանքը, ուր ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Բեթղեհէմի քաղաքապետ՝ Տիար Հաննա Հանանիա, ապա Պատրիարք Սրբազան Հայրը շնորհաւորեց եւ շնորհակալութիւն յայտնեց բոլոր ներկաներուն:

Յետ միջօրէի ժամը 2-ին, Երուսաղէմի Հայ եւ Կ. Պոլսոյ Հայ Պատրիարքները «Հրաշափառ»-ով մուտք գործեցին Ս. Ծննդեան Տաճար եւ Ս. Այր:

Ճրագալոյցի Ս. Պատարագը Ս. Այրին մէջ մատուցանեց եւ «Հայր Մեր»-էն առաջ քարոզեց Կ. Պոլսոյ Հայ Պատրիարք՝ Ն.Ա.Տ. Սահակ Արքեպս. Մաշալեան, որուն սպասարկեցին Կ. Պոլսէն Սուրբ Երկիր ժամանած Պատրիարքի շքախումբի անդամներէն՝ Արժ. Տ. Գրիգոր Աւ. Քհնյ Տամատեան եւ Արժ. Տ. Շիրվան Քհնյ Միւրզեան: Ս. Պատարագի երգեցողութիւնը կատարեցին Կ. Պոլսոյ Պատրիարքական Աթոռոյ Արմաշ Դպրաց դասի անդամները՝ Բարշ. Էտվին Յարութիւն Սրկ. Կալիպեանի ղեկավարութեամբ: Այս առաջին ուխտի պատարագն էր Ամեն. Տ. Սահակ Պատրիարք Սրբազան Հօր: Յաւարտ Ս. Պատարագի, հանդիսապետութեամբ Ս. Աթոռոյս Լուսարարապետ. Գերշ. Տ. Սեւան Արքեպս. Ղարիպեանի Ս. Այրի մուտքին առջեւ կատարուեցաւ նախատօնակ: Ապա՝ Միաբանութիւնը Պատարագիչ՝ Ամեն. Տ. Սահակ Պատրիարք Մաշալեանի հանդիսապետութեամբ բարձրացաւ Հայոց Վանք. բակին մէջ կարդացուեցաւ Ս. Ծննդեան Աւետարանը եւ երգուեցաւ «Փառք ի բարձունս»:

Սրբազան արարողութիւններէն յետոյ, երեկոյեան ժամը 7-ին, Ս. Ծննդեան տօնին առիթով Պատրիարք Սրբազան Հօր կողմէ տրուած հիւրասիրութեան սեղանակից եղան Ամեն. Տ. Սահակ Պատրիարք Մաշալեան, Պաղեստինի վարչապետ՝ Վսեմաշուք Տիար Մոհամմատ Շտայէհ, Բեթղեհէմի քաղաքապետ՝ Տիար Հաննա Հանանիա, նահանգապետը՝ Տիար Քեամալ Ահմատ Հասան Ամիդ, Պաղեստինի քրիստոնեաներու հարցերով բարձրագոյն խորհուրդի նախագահ՝ Տիար Ռամզի Խուրի, Երուսաղէմի Ասորի Եկեղեցւոյ եպիսկոպոսական առժամեայ փոխանորդ՝ Գերշ. Տ. Անթիմոս Ճաք Յակոբ, Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը եւ հայ համայնքի ներկայացուցիչները:

Նոյն գիշեր ժամը 10-ին, սկսաւ Սուրբ Ծննդեան գիշերային արարողութիւնը: Կատարուեցան Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւններ: Գիշերուայ ժամը 12-ին (որ

է Յունուար 19-ի առաւօտեան) Միաբանութիւնը Ն.Ա.Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի եւ Ն.Ա.Տ. Սահակ Պատրիարք Մաշալեանի հանդիսապետութեամբ իջան Սուրբ Ծննդեան Այր, ուր կարգացուեցաւ Յիսուսի ծննդեան աւետիսը եւ երգուեցաւ «Փառք ի բարձունս» երգը, աւետելով Քրիստոսի խաղաղութեան եւ ի մարդիկ հաճութեան բարի լուրը: Սուրբ Այրին մէջ կատարուած արարողութեան ներկայ էին նաեւ Պաղեստինի վարչապետ՝ Վսեմաշուք Տիար Մոհամմատ Շտայէհ, Բեթղեհէմի քաղաքապետ՝ Տիար Հաննա Հանանիա եւ Պաղեստինի քրիստոնեաներու հարցերով բարձրագոյն խորհուրդի նախագահ՝ Տիար Ռամզի Խուրի, որոնք Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամեն. Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի Ծննդեան պատգամէն յետոյ իրենց շնորհաւորանքը յայտնելով՝ մեկնեցան:

Սուրբ Այրի արարողութենէն ետք, պաշտամունքները շարունակուեցան Տաճարին մէջ, ուր հիւր եկեղեցականներու կողմէ ընթերցուեցան չորս Աւետարաններ: Ապա՝ Ճաշու ժամերգութիւններէն ետք, Աւագ սեղանին վրայ պատարագեց եւ քարոզեց Կ. Պոլիսէն ուխտաւորաբար Սուրբ Աթոռ ժամանած Հոգշ. Տ. Յովակիմ Աբղ. Սերովբեան:

Սուրբ Պատարագին յաջորդեց Զրօրհնեաց արարողութիւնը՝ հանդիսապետութեամբ Հոգշ. Տ. Թէոդորոս Ծ. Վրդ. Զաքարեանի եւ առընթերակայութեամբ Հոգշ. Տ. Կորին Վրդ. Բաղդասարեանի եւ Հոգշ. Տ. Ներսէհ Աբղ. Ալոյեանի: Զրօրհնէքի հոգեպարար արարողութիւնը կատարուեցաւ Աշոտ Երկաթի խաչի կրկնօրինակով, որը անցած է 44-օրեայ պատերազմի մէջէն, Հայոց սահմաններէն եւ եղած է առաջին պաշտպանական կորպուսի գնդերէցի ձեռքին: Հանդիսապետ Հայր Սուրբը արարողութեան վերջաւորութեան ըսաւ, որ Խաչը դարձեալ պիտի վերադառնայ Մայր Հայրենիք եւ թող այն պահապան ըլլայ մեր բոլոր զինուորներուն, Հայաստան եւ Արցախ աշխարհներուն եւ մեր հաւատաւոր ժողովուրդին:

Զրօրհնէքէն յետոյ կատարուեցան Ճաշու ժամերգութիւններ, ապա Ս. Ծննդեան Այրին մէջ պատարագեց հանդիսապետ՝ Հոգշ. Տ. Թէոդորոս Ծ. Վրդ. Զաքարեան:

Պաշտամունքներու աւարտին, առաւօտեան ժամը 6:00-ին, Միաբանութիւնը թափօրով եւ երգեցողութեամբ բարձրացաւ Հայոց վանք, ուր դարձեալ կարգացուեցաւ Ս. Ծննդեան Աւետարանը եւ երգուեցաւ «Փառք ի բարձունս», ապա Միաբանութիւնը վերադարձաւ Երուսաղէմ:

ՏԱՐԵԿԱՆ ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ ԳԷՊԻ ՅՈՐԴԱՆԱՆ ԳԵՏ

Կիրակի, 22 Յունուար, 2023-ին, առաւօտեան ժամը 11:30-ին, Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկեան Պատրիարք Սրբազան Հայրը եւ Կ. Պոլսոյ Հայ Պատրիարք՝ Ամենապատիւ Տ. Սահակ Արքեպիսկոպոս Մաշալեան Պատրիարք Սրբազան Հայրը ընկերակցութեամբ՝ Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեանի եւ միաբան հայրերու այցելեցին աշխարհի ամենահին քաղաք՝ Երիքով եւ հանդիպում ունեցան կառավարիչ՝ Մեծայարգ Տիար Մաճիտ Ալ-Ֆիտանիի հետ: Պատրիարք Սրբազան եւ հոգեւոր հայրեր զիմաւորութեան Երիքովի կառավարութեան ողջ աշխատակիցներուն կողմէ եւ անոնց հետ ձեռնուելէ ետք ներս հրաւիրուեցան: Իր խօսքին մէջ Երիքովի կառավարիչ՝ Տիար Մաճիտ Ալ-Ֆիտանի, յայտնեց իր ուրախութիւնը զոյգ Հայ Պատրիարքներու այցին համար: Ապա Սուրբ Աթոռոյս Գահակալը շնորհակալութիւն յայտնեց ջերմ ընդունելութեան ու հիւրասիրութեան համար եւ յաջորդ

տարի դարձեալ տեսնուելու յոյսով՝ հրաժեշտ տուաւ կառավարիչին:

Հանդիպումէն յետոյ զոյգ Պատրիարք Սրբազաններու գլխաւորած պատուիրակութեան միացան նաեւ ողջ Միաբանութիւնը, ժառանգաւոր սաներ եւ ուխտաւորներու խումբերամբ բազմութիւնը, որոնք ուղղուեցան դէպի Յորդանան գետ, ուր ձեռամբ Կ. Պոլսոյ Հայ Պատրիարք՝ Ամենապատիւ Տ. Սահակ Արքեպիսկոպոս Մաշալեանի կատարուեցաւ տարեկան Զրօրհնեաց արարողութիւնը: Այս տարուան խաչ-քաւորն էր ժառանգաւոր սաներէն Մուշեղ Սարգսեան:

Յորդանանեան կողմէ գետափ եկած էին Ամմանի Պատրիարքական փոխանորդ՝ Հոգ. Տ. Աւետիս Ծ. Վրդ. Իփրաճեան իր գաղութի հաւատացեալներու հետ միասին:

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ

Նորին Ամենապատուութիւն Տ. Նուրհան Արք. Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր տնօրինութեամբ 13 Յունուար, 2023-ին, Հոգեշնորհ Տ. Պարեա Ծ. Վրդ. Երէցեան ազատուած է Սուրբ Աթոռոյս Կալուածոց տեսչի պաշտօնէն:

Սուրբ Աթոռոյս Կալուածոց նոր տեսուչ նշանակուած է Հոգեշնորհ Տ. Կորին Վրդ. Բաղդասարեան:

23 Յունուար, 2023-ին, Նորին Ամենապատուութիւն Տ. Նուրհան Արք. Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր տնօրինութեամբ, Հոգեշնորհ Տ. Աղան Արք. Գոգչեան նշանակուած է Սուրբ Աթոռոյս Դիւանապետ:

ՏՕՆ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՒՐԱՐԻ ՏԸԻՉՈՒԹԻՒՆ

26 Յունուար, 2023-ին, Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Անուանակոչութեան տօնի առաւօտեան ժամը 8:45-ին, Սր. Յակոբեանց Միաբանութիւնը հանդիսապետութեամբ Կ. Պոլսոյ Հայ Պատրիարք՝ Ամենապատիւ Տ. Սահակ Արքեպիսկոպոս Մաշալեանի, «Հրաշափառ»-ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար: Ապա Ս. Գերեզմանի առջեւ կատարուեցաւ ճաշու ժամերգութիւն, որմէ յետոյ Քրիստոսի Լոյս Գերեզմանին վրայ մատուցուեցաւ Ս. Պատարագ: Պատարագեց եւ քարոզեց Ամենապատիւ Տ. Սահակ Արքեպիսկոպոս Մաշալեան Պատրիարք Սրբազան Հայրը:

Քարոզէն առաջ պատարագիչ՝ Ն.Ա.Տ. Սահակ Պատրիարք Սրբազան Հայրը Քրիստոսի Սուրբ Գերեզմանին առջեւ ուրար կրելու իրաւունք շնորհեց Սուրբ Յարութեան Տաճարի ծառայող միաբաններէն Նարեկ Դանիէլեանի եւ Կ. Պոլսէն ուխտաւորաբար Սուրբ Աթոռոս գտնուող Պարգեւ Օհանեանի եւ Արտէն Միւճէրրէթօղլուի:

Պատարագէն յետոյ, Մայրավանք վերադարձի ճանապարհին ոստիկանատան առջեւէն եկեղեցական թափօրով եւ «Լոյս ի Լուսոյ» շարականի երգեցողութեամբ Միաբանութիւնը, ժառանգաւոր սաներ եւ հաւատացեալ եւ ուխտաւոր ժողովուրդը բարձրացան Պատրիարքարան, ուր ժամօրհնող՝ Հոգ. Տ. Խաղ Վրդ. Ժոնատուրեան կարդաց Ս. Ծննդեան Աւետարանը, երգուեցաւ «Փառք ի բարձունս», ապա կատարուեցաւ այս տօնին յատուկ «Տնօրհնէք»-ի արարողութիւն, որու ընթացքին Ամենապատիւ Տ. Սահակ Պատրիարք Սրբազան Հայրը օրհնեց Ս. Աթոռոյս աղը, հացը, ջուրը եւ բոլոր բա-

րութիւնները: «Տնօրհնէք»-էն ետք հաւատացեալ ժողովուրդը առնելով Ս. Աթոռի օրհնըւած բարիքներէն՝ իրենց տուն տարին, որպէս օրհնութիւն խառնելու իրենց տան բարիքներուն:

«Տնօրհնէք»-էն յետոյ Սուրբ Աթոռոյ Գահակալ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկեան Պատրիարք Սրբազան Հայրը ներկաներուն բաժնեց նաեւ աւանդական օրհնուած նարինջներ: Պատրիարքարանէն իջնելով Միաբանութիւնը թափօրով մեկնեց դէպի Վարդապետաց միաբանական ճաշարան, ուր ժամօրհնող՝ Հոգւ. Տ. Խաղ. Վրդ. Զոննտուրեան «Տնօրհնէք» կատարեց:

«Տնօրհնէք» կատարուեցաւ նաեւ Ժառանգաւորաց վարժարանի եւ Ընծայարանի ճաշարանին մէջ, որ դարձեալ կատարեց ժամօրհնող Հայր Սուրբը:

ՅԱՐՁԱԿՈՒՄ ՍԱՂԻՄԱՀԱՅԵՐՈՒ ԵՒ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ՎՐԱՅ

28 Յունուար, 2023-ի ուշ երեկոյեան, երկու հրեայ ծայրայեղականներ Հայոց Պատրիարքարանի փողոցէն «Լացի պատ» երթալու ատեն, Հայոց Վանքին դիմաց նախ փորձած են խոչընդոտել մեքենաներու երթեւեկը, ապա ճամբայէն դուրս ելլելով սկըսած են հարուածել աշխատանքէն տուն դարձող Հայ երիտասարդներու ինքնաշարժին: Հայ երիտասարդներ իջնելով մեքենայէն՝ քաղաքաւար ձեւով հարցուեցեր են. «Ինչո՞ւ կը հարուածէք ինքնաշարժին, ասիկա մեր թաղամասն է, մենք աշխատանքէն տուն կը դառնանք: Միշտ յարգած ենք հրեաներուն, ինչո՞ւ այսպիսի բաներ կընէք, մենք ինչ ըրած ենք ձեզի»:

Հրեայ ծայրայեղականներէն մին սկսած է պոռալ. «Դուք հոս թաղամաս չունի՛ք: Ասիկա մե՛ր երկիրն է, գացէ՛ք մեր երկիրէն»:

Եւ երբ հայ երիտասարդներ ըսած են, «Ասիկա նաեւ մե՛ր երկիրն է, մեր տունը հո՛ս է, մենք հո՛ս ծնած ենք, ուրիշ տեղ չունինք երթալու», միւս ծայրայեղականը արցունքաբեր կազ սրսկած է Հայ երիտասարդի աչքերուն եւ երկուքը միասին փախուստի դիմած են: Հայ երիտասարդները փորձած են հետապնդել ասոնց, որպէսզի ոստիկանութեան յանձնեն, սակայն արցունքաբեր կազին պատճառով հետապնդումը չեն շարունակած. ընկերը տուժողին փոխադրած է հիւանդանոց:

Հիւանդանոցէն վերադարձին, Հայ երիտասարդները անմիջապէս բողոք ներկայացուցեր են ոստիկանութեան, որոնք յայտնաբերած են երկու հրեայ ծայրայեղականները եւ ձերբակալած են անոնց: Անոնցմէ մէկուն լուսադէմին ազատ արձակած են, իսկ արցունքաբեր կազ սրսկողը քանի մը օր ձերբակալուած էր:

Այս դէպքէն մէկ ժամ ետք, հրեայ ծայրայեղականներու ուրիշ խումբ մը «Լացի պատ» երթալու ատեն, կ'անցնէր Հայոց Պատրիարքարանի փողոցէն: Անոնցմէ մի քանին փորձած են մագլցիլ եւ բարձրանալ Պատրիարքարանի տանիքը եւ վար առնել Պատրիարքարանի խաչակիր եւ Հայաստանի Հանրապետութեան եռագոյն դրօշները: Նոյն պահուն, վանքին դիմաց կեցած Հայ երիտասարդները նկատելով այդ՝ մօտեցած եւ արգիլած են հրեայ ծայրայեղականներու գործողութիւնները, վերջիններս փախուստի դիմած են եւ շուտով վերադարձած են դիմակաւորուած աւելի փոքրիկ խումբով:

Դիմակաւոր հրեայ ծայրայեղականները նորէն փորձած են կռիւ հրահրել, Հայ

երիտասարդներու ուղղութեամբ եթերի մէջ արցունքաբեր կազ սրսկած են, հայհոյած են Հայերուն եւ փախուստի դիմած են ոստիկանատան ուղղութեամբ: Հայ երիտասարդները հետապնդած են անոնց, եւ երբ վերջիններս նկատած են, որ Հայեր կը հետապնդեն իրենց՝ պոռալու սկսած են. «Տեռորիստական յարձակո՛ւմ, տեռորիստական յարձակո՛ւմ»:

Ոստիկանները կարծելով որ հրեայ ծայրայեղականներու պոռալ-կանչելները ճիշդ են, գոցած են Հայ երիտասարդներու ճանապարհը, զէնքերնին պահելով անոնց վրայ՝ ծեծելու սկսած են անոնցմէ մի քանիին, իսկ Գէորգ Քահկէճեանը ձերբակալելով տարած են ոստիկանութիւն, մեղադրելով անոր, թէ իբր վերջինս յարձակած է ոստիկանի մը վրայ: Այս մեղադրանքը իրականութեան հետ աղերս չունի:

Ողջ գիշեր ոստիկանատան մէջ Գէորգ Քահկէճեանը ազատելու համար ոստիկաններու հետ բանակցութիւններու մէջ էր Սուրբ Աթոռոյս Դիւանապետ՝ Հոգեշնորհ Տ. Աղան Աբղ. Գոգչեան: Սակայն Գէորգ Քահկէճեանը մէկ գիշեր ոստիկանատան մէջ պահելով, յաջորդ օրը, Յունուար 29-ին, կէսօրէ ետք, Նորին Ամենապատուութիւն Տ. Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր անմիջական միջնորդութեամբ եւ դատարանի որոշումով ազատ արձակուեցաւ եւ անոր որպէս պատիժ տրուեցաւ 20-օրեայ տնային կալանք: Եւ քանի որ Գէորգ Քահկէճեան ունի ֆիզիքական վնասուածքներ, վանքին փաստաբանի միջնորդութեամբ ոստիկանութիւնը արտօնած է, որ վերջինս բժշկական քննութիւն անցնի:

ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐՈՒ ԵՒ ԿՐԿՆԱԿԱԶՄԵՐՈՒ ԱՌԺԱՄԵԱՅ ՅՈՒՅԱՀԱՆԴԷՍ ՀԵԼԷՆ ԵՒ ԷՏՈՒԱՐՏ ՄԱՐՏԻԿԵԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան Հելէն եւ Էտուարտ Մարտիկեան թանգարանի առաջին յարկին մէջ Սուրբ Աթոռոյս Ձեռագրատունը Յունուար 21-էն սկսեալ մինչեւ Փետրուար 4 բացած էր «Սուրբ Ծննդեան խորհուրդը» խորագիրը կրող առժամեայ ցուցահանդէս: Ցուցանմոյշները Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանի Գանձատան եւ Սուրբ Թէոդորոս Ձեռագրատան հաւաքածոներու մէջ եղած Սուրբ Ծննդեան մանրանկարներն ու կրկնակազմերն էին, որոնցմէ ամենաուշագրաւը 1591 թ.-ին Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց վանքին մէջ գրուած Խաչատուր Հիզանցի ծաղկած Վարք Սրբոցն էր, որի պատուիրատուն եղած է Սուրբ Գրիգոր Պարոն-Տէր Պատրիարքը:

ԵՐՈՒՍԱԳԼԷՄԻ ԱՍՈՐԻՈՅ ՆՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԱՌԱՋԻՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՄՈՒՏՔԸ ՍԲ. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԱՃԱՐ

4 Մարտ, 2023-ին, Երուսաղէմի Ասորւոց նոր Եպիսկոպոս՝ Գերաշնորհ Տ. Անթիմոս Ճաք Յակուբ կատարեց իր առաջին պաշտօնական մուտքը Սբ. Յարութեան տաճար:

Գերաշնորհ Սրբազան Հայրը դիմաւորուեցաւ Երուսաղէմի հին քաղաքի՝ Եաֆաջի դարպասին առջեւ, եւ Սուրբ Երկրի քրիստոնեայ միւս յարանուանութեանց ներկայացուցիչներու ուղեկցութեամբ առաջնորդուեցաւ դէպի Սբ. Յարութեան տաճար, ուր դիմաւորուեցաւ նաեւ Սբ. Յարութեան տաճարի իրաւատէր երեք համայնքներու տեսուչներու կողմէ:

Ս. Գերեզմանի այցելութենէն ետք, Ասորւոց Գերաշնորհ Սրբազան Հայրը պատուեցաւ Հայոց տեսչարանին մէջ, ուր ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Սբ. Յարութեան տաճարի Հայոց տեսուչը՝ Հոգեշնորհ Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան, ապա Ասորւոց առաջնորդը իր շնորհակալական խօսքն ըսաւ զինքը դիմաւորող իրաւատէր երեք համայնքներու ներկայացուցիչներուն:

Հայոց հիւրասիրութենէն ետք, Գերաշնորհ Տ. Անթիմոս Ճաք Յակուբ առաջնորդեցաւ Հայոց Սբ. Արեմաթեայի մատուռ, ուր տեղի ունեցաւ կարճ աղօթք:

Սոյն արարողութեանց Պատրիարքութեանս կողմէ ներկայ գտնուեցան Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեան, Սբ. Յարութեան Տաճարի Տեսուչ՝ Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան, Սբ. Աթոռոյս Թարգման՝ Տ. Վազգէն Աբղ. Ալէքեան եւ Դիւանապետ՝ Տ. Աղան Աբղ. Գոգչեան:

ՂԱՏԻՆԵՐՈՒ ՍԲ. ՄԱՐՏԻՐՈՍԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԲԱՅՈՒՄ ԲԵԹՂԵՇԷՄԻ ՄԷՋ

9 Մարտ, 2023-ին, Բեթղեհէմի մէջ տեղի ունեցաւ Ղպտիներու Սբ. Մարտիրոսաց եկեղեցւոյ բացման արարողութիւնը: Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան կողմէ ներկայ գտնուեցան Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպս. Ղարիպեան, Դիւանապետ՝ Հոգեշնորհ Տ. Աղան Աբղ. Գոգչեան եւ Բեթղեհէմի Սբ. Մնընդեան տաճարի տեսուչ՝ Հոգեշնորհ Տ. Ասպետ Ծ. Վրդ. Պալեան:

Լուսարարապետ Տ. Սեւան Արքեպս. Ղարիպեան Սրբազան Հայրն իր խօսքին մէջ շեշտելով եկեղեցիներու կարեւորութիւնն՝ ըսաւ. «Երբ որեւէ երկրին մէջ եկեղեցիները կը շատնան՝ բանտերը կը պակսին, մարդոց մէջ շարութիւնը կը մեռնի եւ սէրը կը ծնի, որովհետեւ եկեղեցիներու միջոցով անոնք կը մօտենան սիրոյ Վարդապետին»:

Սբ. Մարտիրոսաց եկեղեցւոյ բացումէն ետք, տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:

«ՀԱՅՈՅ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՅՈՒՇԱՏԵՂԻԻ» ԲԱՅՈՒՄ ՀԱՅՖԱՅԻ ՄԷՋ

20 Մարտ, 2023-ին, Երեկոյեան ժամը 4:30-ին, հակառակ Թել Ավիւի մէջ Թուրքիոյ դեսպանութեան ճնշումներուն, Իսրայէլի Հայֆա քաղաքին մէջ, Պէն Կուրիւն պողոտայի 26ա հասցէին վրայ տեղի ունեցաւ «Հայոց ցեղասպանութեան յուշատեղիի» բացման եւ ցուցանակի քօղագերծման արարողութիւնը:

Ի յիշատակ Հայոց ցեղասպանութեան, Հայֆայի մէջ յուշարձան կանգնեցնելու եւ յուշատեղի բացելու նախագիծը հեղինակած է Հայֆայի Քաղաքային խորհուրդի անդամ՝ Տիար Նիր Շուպեր:

Հայոց ցեղասպանութիւնը վկայակոչող յուշատեղիի նախագիծը միաձայն որոշումով ընդունուած է Հայֆայի Քաղաքային խորհուրդին կողմէ՝ 25 Հոկտեմբեր, 2022-ի նիստին մէջ:

Նիր Շուպերի նախագիծը քննարկման դրուելէ անմիջապէս յետոյ, Թուրքիոյ մէջ քաղաքական խլրտումներ սկսած են, մինչեւ իսկ պաշտօնական Թուրքիան դիմած է Իսրայէլի կառավարութեան՝ խնդրելով կանխել յուշարձանի տեղադրման եւ յուշա-

տեղիի բացման նախաձեռնությունը: Իսրայելի Արտաքին Գործոց Նախարարությունը ի պատասխան Թուրքիոյ խնդրանքին, յայտարարած է որ կառավարությունը իրաւունք չունի խոչընդոտելու քաղաքային խորհուրդի որոշումին:

«Հայոց ցեղասպանութեան յուշատեղիի» բացման արարողութեանը Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան կողմէ ներկայ գտնուեցան Դիւանապետ՝ Հոգեշնորհ Տ. Աղան Աբղ. Գոգչեան, Կալուածոց տեսուչ՝ Հոգեշնորհ Տ. Կորին Վրդ. Բաղդասարեան եւ Հայֆայի Հայոց հոգեւոր հովիւ՝ Արժանապատիւ Տ. Տիրայր Քհնյ Յովակիմեան: Բացման արարողութեանը ներկայ էր նաեւ Իսրայելի մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպան՝ Տիար Արման Յակոբեան:

Բացման արարողութեան ընթացքին Դիւանապետ՝ Հոգեշնորհ Տ. Աղան Աբղ. Գոգչեան փոխանցեց Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի ողջոյնի խօսքն ու շնորհակալիքը՝ ուղղուած Հայֆայի Քաղաքային խորհուրդին, քաղաքապետուհի՝ Տիկին Էյնաթ Կալիշ-Ռոտէմին եւ ներկաներուն: Ապա խօսք առաւ Իսրայելի մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպան՝ Տիար Արման Յակոբեան, իսկ քաղաքապետուհի՝ Տիկին Էյնաթ Կալիշ-Ռոտէմ իր խօսքին մէջ ըսաւ, թէ «Հայֆա քաղաքը նախընտրեց ոգեկոչել Հայոց ցեղասպանութիւնը՝ այդպիսով արտայայտել իր աջակցութիւնը եւ կիսել ապրող Հայ համայնքի անդամներու ցաւը: Մենք կը հասկնանք ցեղասպանութիւնը յիշելու եւ այն գալիք սերունդներուն փոխանցելու պատմական կարեւորութիւնը, քանի որ որպէս Հրեայ ժողովուրդ բարոյական պարտաւորութիւն ունինք չանտեսելու մէկ այլ ազգի հանդէպ դրսեւորուած անարդարութիւնը»:

Իսկ նախագծի հեղինակ՝ Տիար Նիր Շուպեր յոյս յայտնեց, թէ այս տարի Իսրայելի պետութիւնը նոյնպէս կը միանայ ԱՄՆ-ին եւ եւրոպական միւս երկրներուն, որոնք արդէն ճանչցած են Հայոց ցեղասպանութիւնը, մենք ամուր կանգնած ենք մեր Հայ եղբայրներու կողքին», - եզրափակած է Տիար Նիր Շուպեր:

Պատրաստեց՝ ՆԵՐՍԵՎ ԱՔԵՂԱՅ ԱԼՈՅԵԱՆ

